ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2018 թ. N 832-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 715-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 28-ի «2018 թվականին կարկտահարության հետևանքով վնաս կրած հողօգտագործողներին և գյուղատնտեսական կենդանիներ տիրապետողներին պետական աջակցություն ցուցաբերելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» N 715-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում «341 727 240 (երեք հարյուր քառասունմեկ միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր քառասուն)» բառերը փոխարինել «349 291 240 (երեք հարյուր քառասունինը միլիոն երկու հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր քառասուն)» բառերով.

2) որոշման N 3 հավելվածի N 2 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ